ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
ՍՑ-32/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ՍՑ-ԳԲԽ-32/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2017թ. թիվ 03/73-3/4645-17 գրությամբ ներկայացված «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին (00862214) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-32/17 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2017թ. թիվ 03/73-3/4645-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.03.2017թ. թիվ ԴՎԱ/626 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի 27.03.2017թ. գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), պարզել է հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.03.2017թ. թիվ ԴՎԱ/626 գրության հիման վրա, 16.03.2017թ. թիվ 03/73-3/4645-17 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝

Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության 13.03.2017թ. թիվ ԴՎԱ/626 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 20.03.2017թ. թիվ 02/04.1/1028-17 գրությամբ դիմել է «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին:

Ընկերությունը 27.03.2017թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն մասնակցել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով շարժիչի յուղերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգին և 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն 5-րդ չափաբաժնով պահանջել է SYNPOWER 2T կամ համարժեք յուղ, որը արտադրվում է միայն VALVOLINE ընկերության կողմից:

Ընկերությունը, հիմք ընդունելով «կամ համարժեք» ձևակերպումը, առաջարկել է SYNPOWER 2T յուղի համապատասխանության սերտեֆիկատին համարժեք պարամետրերով յուղ:

Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը և առաջարկել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ապրանքանիշի անվանումը և տեխնիկական բնութագիրը, ինչից հետո մերժել է այն պատճառաբանությամբ, որ ապրանքը չի համապատասխանում Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուի կողմից տրված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում իրենց կողմից հղում արված ապրանքի պաշտոնական տեխնիկական բնութագրին, այդ չափանիշներին լիովին համապատասխան յուղ չի արտադրվում, իսկ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրի չափանիշները Պատվիրատուի պահանջներից տարբերվել են 3-5 տոկոսով:

«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Պատվիրատուի կողմից նշվել է, որ ապրանքը պետք է համապատասխանի միջազգային SAE, API:TC ստանդարտին, իսկ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքը համապատասխանում է այդ ստանդարտին:

Ընկերությունը գտնում է, որ չնայած նրան, որ «կամ համարժեք» ձևակերպումը առկա էր գնման ընթացակարգի հրավերում, Պատվիրատուն ուղղակիորեն մերժել է համարժեք ապրանքի ընդունումը՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետը, իսկ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուի պահանջների խախտում տեղի չի ունեցել, հետևաբար Պատվիրատուի դիմումը չի կարող հիմք հանդիսանալ Ընկերությանը տուգանելու և Ցուցակում ներառելու համար:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը, 13.03.2017թ. թիվ ԴՎԱ/626 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, մասնագիտական եզրակացության համաձայն, համարժեք չի հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրին:

Միաժամանակ, Պատվիրատուն վերը նշված գրությանը կից Նախարարությանն է տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-32/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2017թ. թիվ 03/73-3/4645-17 գրությամբ ներկայացված «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Շարժիչի յուղի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը ***27.11.2016թ.*** հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքնե-րի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության

վերաբերյալ հայտարարությամբ *հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող 5-րդ չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:*

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Նույն արձանագրության 1.3 կետով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

5. Պատվիրատուն 31.01.2017թ. ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով 31.01.2017թ. գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, ուստի անհրաժեշտ է Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ***a.grigoryan@mil.am*** էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետի «ա» ենթակետով նախատեսված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.02.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով ներկայացրել է համարժեք տեխնիկական բնութագրեր, սակայն ՀՀ ԶՈՒ թիկունքի պետ-վարչության պետ Ն. Յոլչյանի կողմից 08.02.2017թ. գնահատող հանձնաժողովին ներկայացվել է մասնագիտական եզրակացություն, *որ Ընկերության կողմից Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերը համարժեք չեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին:*

7. Ընթացակարգի հրավերին կից հավելված թիվ 1 տեխնիկական բնութագիրը, մասնավորապես, 5-րդ չափաբաժնի համար կազմվել է հետևյալ տեսքով՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

5.	SIMPOWER 2T	Միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք Երկտակտային շարժիչի համար: - մածուցիկությունը 100^{0}C դեպքում՝ 10.0 մմ^2/վ, 40^{0}C դեպքում՝ 60.0 մմ^2/վ - մածուցիկության ինդեքսը՝ 162, - հիմնային թիվը՝ 3.1 մգ KOH/գ, - բռնկման ջերմաստիճանը՝ 80^{0}C, - սառչման ջերմաստիճանը՝ -51^{0}C, - խտությունը՝ 15,6^{0}C դեպքում՝ 0,873գ/սմ^3: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով:

8. «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 5-րդ չափաբաժնի համար հայտի տեխնիկական բնութագրով սահմանել է՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
5.	Շարժիչի յուղ, սինթետիկ /SIMPOWER 2T/	Միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք Երկտակտային շարժիչի համար: - մածուցիկությունը 100^{0}C դեպքում՝ 8.4 մմ^2/վ, 40^{0}C դեպքում՝ 50.2 մմ^2/վ - մածուցիկության ինդեքսը՝ 141, - հիմնային թիվը՝ 1.25 մգ KOH/գ, - բռնկման ջերմաստիճանը՝ 112^{0}C, - սառչման ջերմաստիճանը՝ -47.5^{0}C, - խտությունը՝ 15,6^{0}C դեպքում՝ 0,861գ/սմ^3: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.02.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընկերության կողմից 5-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, մասնագիտական եզրակացության համաձայն, չի համապատասխանում որպես համարժեք տեխնիկական բնութագրին:

Բացի այդ, Ընթացակարգի հրավերով նախատեսվել է միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք, սակայն Ընկերության կողմից նույն ձևով ներկայացվել է միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք, այնինչ պետք է ներկայացվեր կոնկրետ միջազգային ստանդարտ առանց «կամ համարժեք»-ի:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և մասնակցին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

10. Պատվիրատուն 10.02.2017թ. ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված և «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընկերության կողմից 5-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը մասնագիտական եզրակացության համաձայն չի հանդիսանում որպես համարժեք տեխնիկական բնութագիր:

Բացի այդ, Ընթացակարգի հրավերով նախատեսվել է միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք, սակայն Ընկերության կողմից նույն ձևով ներկայացվել է միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք, այնինչ պետք է ներկայացվեր կոնկրետ միջազգային ստանդարտ առանց «կամ համարժեք»-ի:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետը՝ անհրաժեշտ է նույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, իսկ շտկված փաստաթուղթը ուղարկել ***a.grigoryan@mil.am*** էլեկտրոնային փոստի հասցեին:

11. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ հաշվի առնելով, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով ներկայացրել է համարժեք տեխնիկական բնութագրեր, սակայն ՀՀ ԶՈՒ թիկունքի պետ-վարչության պետ Ն. Յոլչյանի կողմից 16.02.2017թ. գնահատող հանձնաժողովին ներկայացվել է *մասնագիտական եզրակացություն, որի համաձայն Ընկերության կողմից Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերը համարժեք չեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին, որի հիման վրա գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի հայտը:*

12. Պատվիրատուն Ընկերության կողմից առաջարկվող՝ 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ 08.02.2017թ. և 16.02.2017թ. տվել է նույնաբովանդակ մասնագիտական եզրակացություն, որոնց համաձայն՝ 5-րդ չափաբաժնում նշված SIMPOWER 2T շարժիչային յուղի տեխնիկական բնութագիրը համարժեք չէ ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրին, քանի որ նշված պարամետրերը չեն համապատասխանում

(մածուցիկության, մածուցիկության ինդեքս, հիմնային թիվ, բռնկման և սառչման ջերմաստիճաններ, խտություն):

13. «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից **20.04.2017թ.** հայտ է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/58» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին մասնակցելու համար:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ***ներկայացրել է կեղծ տվյալ***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման

չափանիշների, ***իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում*** այդ որակավորման չափանիշները կամ ***տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Շարժիչի յուղի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով գնման ընթացակարգ, որի մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 5-րդ չափաբաժնով սահմանվել է ապրանքի անվանումը՝ *«SIMPOWER 2T»*, բնութագիրը՝ *միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք, երկտակտային շարժիչի համար,* ***մածուցիկությունը 100^{0}C դեպքում՝ 10.0 մմ^2/վ, 40^{0}C դեպքում՝ 60.0 մմ^2/վ, մածուցիկության ինդեքսը՝ 162, հիմնային թիվը՝ 3.1 մգ KOH/գ,*** *բռնկման ջերմաստիճանը՝ 80^{0}C,* ***սառչման ջերմաստիճանը՝ -51^{0}C, խտությունը՝ 15,6^{0}C դեպքում՝ 0,873գ/սմ^3,*** *փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով:*

Ընկերությունը ***27.11.2016թ.*** հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ **հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող 5-րդ չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:**

Ընկերությունը ներկայացրած հայտի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 5-րդ չափաբաժնի համար նախատեսված գնման առարկայի համար ներկայացրել է՝ *շարժիչի յուղ, սինթետիկ «SIMPOWER 2T», միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք, երկտակտային շարժիչի համար, մածուցիկությունը* ***100^{0}C դեպքում՝ 8.4 մմ^2/վ, 40^{0}C դեպքում՝ 50.2 մմ^2/վ, մածուցիկության ինդեքսը՝ 141, հիմնային թիվը՝ 1.25 մգ KOH/գ,*** *բռնկման ջերմաստիճանը՝ 112^{0}C,* ***սառչման ջերմաստիճանը՝ -47.5^{0}C, խտությունը՝ 15,6^{0}C դեպքում՝ 0,861գ/սմ^3,*** *փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով:*

Պատվիրատուի կողմից «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ վերջինիս կողմից 5-րդ չափաբաժնի համար ներկայացված ապրանքատեսակը համարվել է

ոչ համարժեք, քանի որ առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընկերության կողմից 5-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, մասնագիտական եզրակացության համաձայն, չի հանդիսանում որպես համարժեք տեխնիկական բնութագիր:

Բացի այդ, Ընթացակարգի հրավերով նախատեսվել է միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք, սակայն Ընկերության կողմից նույն ձևով ներկայացվել է միջազգային ստանդարտ SAE, API:TC կամ համարժեք, այնինչ պետք է ներկայացվեր կոնկրետ միջազգային ստանդարտ առանց «կամ համարժեք»-ի:

Խորհուրդը, ուսումնասիրելով Ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը և Ընկերությունը ներկայացրած հայտի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 5-րդ չափաբաժնի համար նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը, արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները.

Ապրանքի տեխնիկական բնութագիրը	**Պատվիրատուի կողմից ներկայացված**	**Ընկերության կողմից ներկայացված**
Անվանումը	Շարժիչի յուղ, սինթետիկ «SIMPOWER 2T»	Շարժիչի յուղ, սինթետիկ «SIMPOWER 2T»
Միջազգային ստանդարտ	SAE, API:TC կամ համարժեք	SAE, API:TC կամ համարժեք
մածուցիկությունը 100^0C դեպքում	**10.0 մմ²/վ**	**8.4 մմ²/վ**
մածուցիկությունը 40^0C դեպքում	**60.0 մմ²/վ**	**50.2 մմ²/վ**
մածուցիկության ինդեքսը	**162**	**141**
հիմնային թիվը	**3.1 մգ KOH/գ**	**1.25 մգ KOH/գ**
բռնկման ջերմաստիճանը	80^0C	112^0C
սառչման ջերմաստիճանը	**-51^{0}C**	**-47.5^{0}C**
խտությունը՝ 15,6^{0}C դեպքում՝	**0,873գ/սմ³**	**0,861գ/սմ³**

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 4.1 հավելվածը՝ 5-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում, քանի որ նշված չափաբաժնի համար նախատեսված, վերը նշված աղյուսակի համաձայն՝

Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերը չի համապատասխանում Պատվիրատուի կողմից սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Խորհուրդն արձանագրում է, որ «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը մասնակցելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, 27.11.2016թ. ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, ինչպես նաև Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ ***27.11.2016թ.-ից*** հաշված մեկ տարվա ընթացքում՝ ***20.04.2017թ. կրկին հայտ է ներկայացրել*** «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/58» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին մասնակցելու համար:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում Ընկերությունը ներկայացրել է կեղծ տվյալ, որը հիմք է «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2017թ. թիվ 03/73-3/4645-17 գրությամբ ներկայացված «Ավտոֆան Էյ ՍԻ» ՍՊԸ-ին (00862214) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Լուսինե Ոսկանյան**

Անդամ՝ **Սյունե Բաղալյան**